Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3213

Ա. ԱՆԱՆՅԱՆ

# ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՈՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄԵՐ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

ԿՈՒՍՀՐԱՏ 1933 ՅԵՐԵՎԱՆ

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

Ս. ԱՆԱՆՅԱՆ

# ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՈՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՅԵՎ

# ՄԵՐ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

A II/38421

ԿՈՒՍՀՐԱՏ 1933 ՅԵՐԵՎԱՆ

Տեխն խմբ. Մ Եփրիկ
Սրբագրեց Ա. Տեր-Մկրտչյան
Հանձնված է արտադրության 1 դեկտեմբերի 1933 թ.
Ստորագրված է տպագրելու 29 ապրիլի 1933 թ.
Տիրաժ 3000 Հրատ № 63, 70 000 տպ նշ

Պետհրատի տպարան. Պատվեր 3674 Գլավլիտ 7697 (բ)

## ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՈՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՏԵՂԵՐՈՒՄ ՅԵՎ ՄԵՐ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ*)

Ընկերներ, հեղափոխական որինականության հարցը առաջին անգամ չէ, վոր քննության են առնում մեր կուսակցական կազմակերպությունները: Կուսակցության Կենտրոնական Կոմիտեն և մեր իշխանությունը տարբեր ժամանակներում բազմիցս քննության են առել այդ խնդիրը և ընդունել են կարևոր վորոշումներ, վորոնցով առաջնորդվում են ներկայումս մեր բոլոր կուսակցական, խորհրդային և դատական որգանները թե՛ գյուղում, և՛ թե քաղաքում:

Հեղափոխական որինականության խնդիրը կուսակցության և իշխանության կողմից առաջին անգամ դրվում է 1918 թվին, յերբ հակախորհրդային ռեակցիոն ուժերը, Խորհրդային Միության տարբեր վայրերում, իմպերիալիստական պետությունների անմիջական մասնակցությամբ և աջակցությամբ, զենքի միջոցով կամենում եյին տապալել խորհրդային իշխանությունը և վերհաստատել ցարական հին կարգերը: Պրոլետարական դիկտատուրայի խորհրդային որգանները ճիշտ այդ ժամանակամիջոցում չափազանց պատասխանատու յեն դառնում, հանդիսանում են յերկրի սև ուժերի դեմ պայքարող լավագույն զենքերից մեկը, միաժամանակ լինելով հեղափոխական որինականության անխնա և անխախտ կիրառողը ամենուրեք:

Յերկրորդ անգամ հեղափոխական որինականության խնդիրը կուսակցության քննության առարկան է դառնում 1921 թվին՝ նոր տնտեսական քաղաքականության կիրառման ժամանակ, յերբ յերկրի ներսում ստեղծվում են տնտեսական նոր փոխհարաբերությունների ձևեր պետական, արդյունաբերական ձեռնարկությունների և վերականգնվող գյուղացիական տնտեսությունների միջև, վորտեղ առանձնապես կարևոր են դառնում դատական որգանների դերն ու անելիքները:

---

*) Զեկուցում ՀԿ (բ) Կ շրջկոմների քարտուղարների հանրապետական խորհրդակցությանը 1932 թ. սեպտեմբերի 18-ին

Երրորդ անգամ հեղափոխական օրինականության խնդիրը քննության է առնվում կուսակցության 14-րդ կոնֆերանսում, 1925 թ., երբ քննվում էր մեր աշխատանքների խնդիրը գյուղում: Այս այն ժամանակներումն էր, երբ գյուղացիական տնտեսությունները զգալիորեն հետ էին մնում սոցիալիստական արդյունաբերության ընդհանուր վերելքից, երբ մեր գյուղական խորհրդային և այլ տարբեր օրգանների վորոշ օղակներում տիրում էր ռազմական կոմունիզմի շրջանից մնացած աշխատանքի մեթոդները, երբ անհրաժեշտ էր ավելի աշխուժացնել գյուղխորհուրդների աշխատանքները, ուժեղացնել աշխատանքը չքավորների մեջ և այլն:

Այս ժամանակներում կուսակցությունն ավելի սուր կերպով դրեց հեղափոխական օրինականության խախտման դեմ պայքարելու խնդիրը, և ընդունվեցին մի շարք կոնկրետ, գործնական վորոշումներ: Վերջապես, հեղափոխական օրինականության հրամայական և կարևոր խնդիրը դրվում է 1932 թ. հունիսի 28-ին՝ առաջին հնգամյակի յեզրափակման տարում, վորի առթիվ հատուկ վորոշումներ են ընդունել թե՛ Համամիութենական Կենտկոմը, և թե Կենտգործկոմն ու Ժողկոմխորհը, վորոնց մասին դուք գրեթե բոլորդ պարտավոր եք տեղյակ լինելու:

Ինչպես տեսնում եք՝ մեր աշխատանքների տարբեր ժամանակներում հեղափոխական օրինականության խնդիրը քննության է առնվում կուսակցության կողմից և նրա բոլշևիկորեն ճիշտ կիրառման գործը սերտորեն կապվում է մեր սոցիալիստական շինարարության բոլոր խնդիրների հետ: Յուրաքանչյուրը ձեզնից այժմ կարող է հարց տալ, թե ինչո՛ւ այսօր այսքան սուր կերպով է դրվում հեղափոխական օրինականության խնդիրը. արդյոք, այժմ տեղերում ավելի՞ են շատացել կուսգծի խախտումներն ու աղավաղումները, քան անցյալներում:

Իհարկե, մեր վիթխարի աշխատանքների պրոցեսներում տարբեր վայրերում մենք ունենք առանձին թերություններ, հեղափոխական օրինականության խախտումներ, ապօրինություններ և այլն, սակայն սրա համար անհրաժեշտ չէ առանձին օրենք և վորոշում հրատարակել մեր կուսակցական և խորհրդային բարձրագույն օրգանների կողմից: Մենք ունենք պայքարի այլ ձևեր կուսակցության գծի վոչ ճիշտ կիրառողների հանդեպ, վորպիսին մենք կիրառում ենք ամենուրեք մեր համապատասխան օրգանների կողմից:

Գլխավոր մոտիվն այն է, որ ներկա էտապում բոլորովին փոխվել են մեր աշխատանքի ձևերն ու մեթոդները թե՛ քաղաքում, և՛ թե գյուղում: Կենտգործկոմի և Ժողկոմխորհի որոշման մեջ ասված է. «առանձնապես կարևոր նշանակություն է ստանում հեղափոխական օրինականության կիրառումը ներկայումս, երբ աշխատավոր գյուղացիների մեծամասնությունը միացել է կոլտնտեսությունների մեջ»:

Հիմնական խնդիրն այն է, որ սոցիալիստական արդյունաբերության անսպառ և հաղթական զարգացման ուղղությամբ արագորեն վերակառուցվում են գյուղացիական հնամենաց տնտեսությունները սոցիալիստական նոր հիմունքներով, որոնց հետևանքով փոխվում է մեր երկրի թե՛ դեմքը, և՛ թե նրա տնտեսական կառուցվածքը:

Այսպիսի պայմաններում հեղափոխական օրինականության խնդիրն ավելի սուր է դրվում նրա համար, որ մեր դասակարգային թշնամին փոխելով իր պայքարի զենքերը, հարմարվելով մեր ներկա պայմաններին, ավելի կատաղի կերպով է դիմադրում մեր հաղթական առաջընթացին սոցիալիստական շինարարության փրոնտում: Եվ յեթե սրանից մի քանի տարի առաջ կարելի յեր համբերատար լինել այս կամ այն վայրում հեղափոխական օրինականության խախտման հանդեպ, ներկա շրջանում ամեն մի նման խախտում կուսակցությունը և իշխանությունը հանդուրժել չեն կարող, քանի որ հեղափոխական օրինականության ամեն մի խախտում միաժամանակ հանդիսանում է սոցիալիստական շինարարության տեմպի և հաղթանակի խանգարում:

Ցես ասացի, որ ներկա պայմաններում մեր դասակարգային թշնամին, կուլակը և դաշնակը գյուղում թե քաղաքում ամեն կերպ աշխատում են խանգարել մեր սոցիալիստական շինարարությունը:

Կոլտնտեսությունների դաշտերում տեղի ունեցած հրկիզումները, նրանց գյուղատնտեսական գործիքների փչացումները, առանձին տեռորներ, որ կազմակերպվում են կուլակային և դաշնակցական հակահեղափոխական էլեմենտների կողմից՝ գալիս են մեզ ասելու, որ նրանց դեմ ճիշտ, ժամանակին և ավելի շեշտակի պայքար կարելի յե մղել այն ժամանակ, երբ պրոլետարիատի դիկտատուրայի օրգան մեր խորհուրդները հեղափոխական օրինականությունը բոլշևիկորեն ճիշտ կենսագործեն մեր դասակարգային բոլոր թշնամիների և կուսակցության գլխավոր գծի գյուղում աղավաղողների դեմ:

*Այն բոլոր վոտնձգությունները, վոր կան գյուղում և քաղաքում մեր դասակարգային թշնամիների կողմից, պարզորեն արտացոլում են, վոր իրենց որհասն ապրող, մեռնող կապիտալիստական էլեմենտների կողմից դասակարգային պայքարը մեր յերկրում ավելի յե սրվում ու կատաղի դառնում, և պատմականորեն ճիշտ են ընկ.* Ստալինի *այն խոսքերը, թե «պատմության մեջ չի յեղել մի դեպք, վոր մեռնող դասակարգը կամավոր կերպով զիջի իր դիրքերը»:*

*Սրանից պետք ե յեզրակացնել, վոր առավելապես մեծանում ե հեղափոխական որինականության անխախտ պահպանման նշանակությունը, յերբ մենք անխնա ու սպառիչ հարվածներ ենք հասցնում յերկրի կապիտալիստական տարրերին: «Մեռնող դասակարգերը դիմադրում են վոչ թե այն պատճառով, վոր նրանք դարձել են ավելի ուժեղ, քան մենք, այլ այն պատճառով, վոր սոցիալիզմն ավելի արագ ե զարգանում, քան նրանք, և նրանք դառնում են ավելի թույլ, քան մենք: Յեվ հենց այն պատճառով, վոր նրանք թուլանում են՝ նրանք զգում են իրենց գոյության վերջին օրերը և ստիպված են դիմադրել բոլոր ուժերով, բոլոր միջոցներով»* (Ստալին):

*Այս բոլորից հետո հիմարություն կլիներ ասել, վոր յերկրորդ հնգամյակում, յերբ մենք ձեռնարկելու յենք անդասակարգ հասարակության կառուցման վիթխարի գործին, մեր աշխատանքները պիտի ընթանան խաղաղ և սահուն պայմաններում, առանց դասակարգային պայքարի: Այդպես մտածում են միայն աջ ոպորտունիստները և ամեն տեսակի հակակուսակցական էլեմենտներ: Դասակարգային պայքարը վոչ թե վերանալու յե յերկրորդ հնգամյակում, այլ նա ավելի յե սրվելու — ինչպես ասում ե կուսակցության* 17-*րդ կոնֆերանսը, — մեր սոցիալիստական շինարարության տարբեր բնագավառներում: Բնական ե, վոր հեղափոխական որինականության պրոբլեմն իր անհրաժեշտությունն ու կարևորությունը հրամայական կերպով պիտի պահպանի նաև յերկրորդ հնգամյակում:*

*Համամիութենական Կենտգործկոմի և Ժողկոմխորհի հունիսի* 28-*ի վորոշումը կանգ ե առնում հեղափոխական որինականության խախտման յերեք հիմնական խնդիրների վրա: Առաջինը՝ չքավոր և միջակ գյուղացիների վերաբերմամբ յերբեմն տեղի ունեցող սխալները հարկման ասպարեզում (միջակ աշխատավորական տնտեսությունների կուլակների շարքը դասելը և այլն): Այնուհետև կո-*

տնտեսական շարժման կամավոր սկզբունքի խախտման դեպքեր, վորոնք առանձնապես աչքի են ընկնում 1930 թ., յերբեմն էլ 1931 թվին մեր հանրապետության տարբեր մասերում: Այս կուսակցության գլխավոր գծի աղավաղումը գյուղական աշխատանքի ասպարեզում, ապօրինի խուզարկությունները, ձերբակալությունները, տուգանքները, ծեծը և այլն:

Միութենական Կենտրոնական Կոմիտեն, խոշոր քաղաքական նշանակություն տալով հեղափոխական որինականությանը, պահանջում է յուրաքանչյուր կուսանդամից, առաջին հերթին կուսկոմի քարտուղարներից, նրա ճիշտ և անշեղ կիրառումը:

Նախքան հեղափոխական որինականության ամրացման հերթական կոնկրետ խնդիրներին անցնելը, թույլ տվեք ինձ փոքր ինչ կանգ առնել հեղափոխական որինականության կիրառման աշխատանքների վրա մեզ մոտ՝ Խորհրդային Հայաստանում: Մեր նվաճումներն այս ուղղությամբ հսկայական են. մեր դատական որգանների աշխատանքները դասակարգային թշնամիներին ժամանակին պատժելու գործում, իշխանության որենքները խախտողների դեմ պայքարը ամենուրեք դրեթե կատարվել են ժամանակին: Հենց այն հանգամանքը, վոր մեզ մոտ հիմնովին վերացել են բանդիտական տարրերը, դրեթե խսպառ չքացել են խուլիգանական արարքները, սրանք լավագույն ապացույցն են հեղափոխական որինականության անխնա և բոլշևիկյան հետևողական կիրառման: Չնայած այս ամենին, այնուամենայնիվ, մենք մեր հանրապետության վորոշ շրջաններում և գյուղերում ունենք մի շարք փաստեր, հեղափոխական որինականության խախտման դեպքեր, վորոնց մասին հարկավոր է այստեղ խոսել, վորպեսզի շտապ միջոցներ ձեռք առնվեն վերացնելու դրանք:

Կենտկոմի և Կենտգործկոմի կողմից Կոտայքի շրջանում ձեռնարկված վերջին ուսումնասիրությունը հայտաբերեց հեղափոխական որինականության խախտման մի շարք փաստեր:

Պարզվում է, վոր այդ շրջանում տուգանքների գանձման ուղղությամբ կան չափազանցություններ: Որինակ, մեկ տարվա ընթացքում շրջանում աշխատավորական տնտեսություններից գանձվել է 23·776 ռ. տուգանք, վորը յեթե բաժանենք ըստ շրջանի տնտեսությունների, յուրաքանչյուր տնտեսության կընկնի մոտավորապես չորս ռուբլի: Արամուս գյուղացի բատրակ Ռուբեն Ցոլոյանը պետության կաշի չհանձնելու համար տուգանվել է 150 ռ., վորպիսի գումար նա վճարելու վոչ մի հնարա-

վորություն չուներ: Հարկավոր է յեղծել Շրջկոմի բյուրոյի վորոշումը, վորպեսզի այդ բատրակին ազատեյին տուգանքից, այլ կերպ նրա տնտեսությունը միանգամայն պետք է քայքայվեր: Շատ հաճախ աշխատավորական տնտեսություններին ու կոլտնտեսականներին տուգանել են շներին կապած չպահելու համար և այլն:

Յեղել են ապորինի ձերբակալությունների դեպքեր, որինակ՝ շրջգործկոմի հրահանգիչը Բաշգյառնու գյուղում ձերբակալում է գյուղի կատարածուին, ուղարկում շրջանային միլիցեյին և հետո գրություն ուղարկում, թե սա «տխուր է, հուպ տվեք»:

Պետք է ասել, վոր այս կամայականությունների դեմ շրջանային կուսակցական կոմիտեն և շրջգործկոմը ժամանակին կտրուկ միջոցներ ձեռք չեն առել և յերբեմն բավական համբերատար վերաբերմունք են ցույց տվել: Որինակ՝ Շրջկոմի բյուրոն վորոշում է Բաշգյառնիի գյուղխորհրդի նախագահին նկատողություն անել՝ մի գյուղացու ծեծելու համար, փոխանակ նման դեպքերում նրան կուսակցությունից վտարելու և դատական պատասխանատվության յենթարկելու: Իհարկե, այս ձևի վորոշմամբ դժվար է ամրացնել հեղափոխական որինականությունը Կոտայքի շրջանի բոլոր գյուղերում:

Յերեկ դուք թերթում կարդացիք Աղավնատան մասին, վորտեղ գյուղխորհրդի նախագահն ու բջիջի քարտուղարը զբաղվել են կամայականությամբ, կատարել են խուլիգանություններ, ապորինի տուգանումներ, բջիջի քարտուղարը վորպես թե ծեծել է մի քանի գյուղացիների, սխալ հարկադրումներ են կատարել և այլն:

Այս տեղեկությունները, վոր ձեզ հայտնեցի, լույս են տեսել մեր մամուլում, այժմ ստուգվում են, և անհրաժեշտ է, վոր շրջանային կուսակցական կոմիտեն և շրջգործկոմը հատուկ ուսումնասիրության միջոցով պարզեն, թե չկա՞ն արդյոք առանձին գյուղեր, վորտեղ կատարվելիս լինեն Աղավնատան նման դեպքեր: Յես կասկածում եմ, թե Աղավնատուն գյուղը առանձին բացառություն կազմի Վաղարշապատի շրջանում, լավ կլիներ հենց այժմյանից ստուգվեր, թե ինչ չափով է կիրառվում հեղափոխական որինականությունը Վաղարշապատի շրջանում:

Վերջերս Կենտկոմի ուղարկած բրիգադը Աշտարակի շրջանում նույնպես հայտաբերել է հեղափոխական որինականության խախտման մի շարք աղաղակող փաստեր: Ժամանակը ինձ

չի ներում մանրամասն կանգ առնելու այդ փաստերի վրա: Թերևս ձեզնից շատերը կարդացած լինեն բոլդաղի ընկերների հոդվածը «Խ. Հ.»-ում: Բավական է հիշել մի փաստ, դեռ յերբ տեղական մի աշխատակից իր հանդեպ գործադրած ապօրինության մասին հեռագիր է կազմում՝ դիմելու Երևան, տեղական հեռագրատան վարիչը հրաժարվում է ընդունել այդ հեռագիրը, պատճառաբանելով, վոր իրեն կարգադրված է տեղական իշխանության հասցեյին դանգատի բնույթ կրող հեռագրեր չընդունել: Հավանական է՝ այստեղ ներկա յեղող ընկերներից շատերը դժվարանան հավատալ այս դեպքի ստուգությանը, վորովհետև Հոկտեմբերյան հեղափոխության 15-րդ տարեդարձին անեկդոտային են թվում նման բաներ, սակայն պետք է հայտարարեմ, վոր այդ դեպքը ճիշտ է և նրա հեղինակը յեղել է Շրջկոմի նախկին քարտուղարը:

Մարտունու Շրջկոմի քարտուղար ընկ. Գասպարյանը դանգատվում եր, վոր նրա շրջանի գյուղերում գյուղացիության մեջ տարածված է ծեծը: Առերևույթ այդ չափազանցություն է, և յեթե ճիշտ է, ապա դարձյալ մեղավորը տեղական որգաններն են, վոր խիստ միջոցներ ձեռք չեն առնում վերացնելու այդ ախտը շրջանի գյուղերից և վճռական միջոցներ ձեռնարկելու հեղափոխական որինականությունը ամրացնելու այդ շրջանում, որինականություն, վորի մասին այժմ կարծես խոսք լինել չի կարող, յեթե հավատանք այդ մասսայական ծեծերի լուրերին:

Հեղափոխական որինականության խախտման դեպքեր տեղի յեն ունեցել Ստեփանավանի և Իջևանի շրջաններում: Երևի դուք հիշում եք Վարանցովկայի միլիցիայի թույլատրած խայտառակ դեպքերը՝ գյուղացիներին ծեծելը, Իջևանի շրջանում միջակ գյուղացիներից վոմանց ունևորների շարքը դասելը և այլն:

Թվածս փաստերը գալիս են մեզ ասելու, վոր մեր վորոշ շրջաններում դեռ լավ չեն հասկացել Համամիութենական Կենտկոմի հոկտեմբերի 31-ի վորոշումը, թույլ է կատարված հեղափոխական որինականության վորոշման մասսայականացումը տարբեր գյուղերում և նույնիսկ շրջանային կենտրոններում: Բավական է հիշել, վոր մինչև վերջին ժամանակներս Աղբաբայի շրջանային մարմինները չեն զբաղվել հիշյալ խնդիրների քննության և մասսայականացման գործով: Վորոշ ընկերներ թերագնահատում են հեղափոխական որինականության խնդիրները և այդ համարում են վոչ իրենց առօրյա աշխատանքը, այլ սոսկ դատական որգանների գործ

և այլն, վորպիսի յերևույթը, իհարկե, հանդուրժել չի կարելի, քանի վոր հեղափոխական որինականության թերագնահատումը թերագնահատում է և սոցիալիստական շինարարության: Լավ պիտի հասկանալ, վոր առանց բոլշևիկյան հետևողական որինականության չկա անարգել և հաջող սոցիալիստական շինարարություն: Կուսակցության Կենտրոնական Կոմիտեն պահանջում է ամեն մի կոմունիստից՝ սկսած գյուղերից, շրջանից մինչև կենտրոն՝ ճիշտ ըմբռնել հեղափոխական որինականության խնդիրները, տալով նրան խոշոր քաղաքական և տնտեսական նշանակություն և դարձնելով այն իրենց առորյա աշխատանքների անբաժան մասնիկներից մեկը:

Վորո՞նք են մեր հերթական անելիքները հեղափոխական որինականության ամրացման ասպարեզում:

## ԿԱԴՐԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Այս խնդիրը շատ յերկար ժամանակ է զբաղեցրել մեր կուսակցական և խորհրդային որգաններին, մանավանդ գավառների լիկվիդացիայից հետո, յերբ նախկին 5 գավառի 5 դատախազների փոխարեն մենք հանրապետության քսանչորս շրջանների համար պիտի տայինք մեկական դատախազներ, չեմ խոսում ժողդատավորների, ժողքննիչների և միլիցեաների մասին:

Այս ուղղությամբ մենք բացել ենք մի շարք կուրսեր, վորտեղ վերապատրաստման ենք յենթարկել դատական որգանների կադրերը, սակայն մենք դրանով չենք կարողացել լրիվին բավարարել մեր պահանջը: Դժբախտաբար, դատական և ադմինիստրատիվ վորակյալ աշխատողներ պատրաստող վորևէ ինստիտուտ չունենք Հայաստանում: Այս ուղղությամբ Կենտկոմը դիմել է վորոշ միջոցների, սակայն յերևի ներկա տարում հնարավոր չի լինի այդ ինստիտուտը բացելու: Անհրաժեշտ է այս աշնանային ամիսներին Յերևանում բացել դատական որգանների հատուկ յերկարատև կուրսեր և այնտեղ վերապատրաստման յենթարկել նոր աշխատողների կադրեր: Չի կարելի անտես անել այն հանգամանքը, վոր դատական որգաններում աշխատող ընկերների պայմանները միանգամայն անբավարար են: Յես գիտեմ շրջաններ, վորտեղ դատախազները մինչև որս դրասենյակ չունեն (որինակ, Վեդի), ապրելու բնակարան չունեն, զուրկ են փոխադրական միջոցներից, և շատ հաճախ այսպի-դրությունը բոլորովին չի մտահոգում մեր շրջանային ղեկավար

ընկերներին: Պետք է վերջ տալ նման դրության մեր շրջաններում: Կենտկոմը պահանջում է մեր շրջանային կուսակցական և խորհրդային օրգաններից ստեղծել աշխատանքի մարդավայել պայմաններ այդ ընկերների համար, վորպեսզի նրանք կարողանան իրենց անմիջական մասնակցությունն ունենալու մեր սոցիալիստական շինարարության խնդիրներին:

Դատական օրգանների հեղինակության բարձրացման և ամրացման խնդիրը ներկա շրջանում մեր կարևոր խնդիրներից մեկն է: Պետք է հասկանալ, վոր հեղափոխական օրինականության խախտման դեմ պայքարողները միայն դատական օրգանները չեն: Վորպեսզի այդ հիմնարկությունները կարողանան ճշտորեն, հետևել և հսկել հեղափոխական օրինականության կիրառման, անհրաժեշտ է նրանց սերտ կերպով օգնել մեր կուսակցական ակտիվով և ստեղծել խորհրդային հասարակայնության դատական օրգանների շուրջը, բարձրացնել նրանց հեղինակությունը, մշտապես օգնել նրանց և հսկել ու անշեղորեն կյանքում կիրառել խորհրդային օրենքները: Այլ կերպ միանգամայն աննորմալ պետք է համարել այն դրությունը, այն փոխհարաբերությունները, վոր գոյություն ունեն Աշտարակի դատական օրգանների և տեղական իշխանության միջև, յերբ չեն վստահում դատախազին, կամ կասկածի տակ են առնում քննիչի ով լինելը և այլն:

Հենց վերցնենք ընկ. Հ. Գասպարյանի յելույթը, վորտեղ նա հայտարարում եր, վոր իրենց շրջանի ժողքննիչը նախկին սպեկուլյանտ է և այլն: Այս աննորմալություններին պետք է վերջ տալ: Սրանք այնպիսի խնդիրներ են, վոր շատ հեշտությամբ և արագությամբ կարող են լուծել մեր շրջկոմներն ու շրջգործկոմները համապատասխան կենտրոնական օրգանների հետ: Պետք է ավելի ուժեղացնել փոխադարձ հարգանքն ու վստահությունը դատական աշխատողների և տեղական շրջանային ղեկավար օրգանների միջև և հրաժարվել այն ձևերից, յերբ շատ հաճախ առանց կենտրոնի հետ համաձայնեցնելու՝ աշխատանքից հանվում են դատախազները, ժողդատավորները կամ քննիչները, խառնվում են նրանց առօրյա աշխատանքներին, յերբեմն դիմազուրկ անելով մեր դատարանները և այլն:

Մեր աշխատանքների կարևոր օղակներից մեկը հանդիսանում է դիմումների ընդունելությունը աշխատավորական մասսաներից և նրանց ժամանակին լուծում տալու կարևոր գործը: Այս ուղղությամբ մենք ունենք բազմաթիվ թերություններ: Յերբեմն պա-

տահում է դեպք, յերբ վորևէ գյուղացու դիմում ամիսների ընթացքում շրջում է հիմնարկից հիմնարկ և վորևէ լուծում չի ստանում: Ցես կարող եյի շատ որինակներ բերել մեր հիմնարկների բյուրոկրատականության, աշխատավորության դիմումների և բողոքների գործերի վերաբերյալ՝ սկսած գյուղից մինչև մեր կենտրոնական որգանները: Հարկավոր է մեր կուսակցական և խորհրդային որգանների ղեկավարների կողմից սահմանել ընդունելության այնպիսի ձևեր, վոր յուրաքանչյուր աշխատավոր գյուղացի, կոլտնտեսական, բանվոր և կարմիր բանակային առանց որեր և յերկար ժամեր կորցնելու, անձամբ հայտնի իր բողոքը հիմնարկության ղեկավարին և ստանա վերջինի աջակցությունը, միաժամանակ ստեղծել այնպիսի պայմաններ, վոր յուրաքանչյուր դրավոր դիմում առնվազն տասը որվա ընթացքում լուծում ստանա մեր շրջանային և կենտրոնական հիմնարկությունների կողմից: Մենք Ֆինժողկոմատում վերջերս կազմակերպել ենք բողոքներ ընդունող բյուրո: Նույնը պետք է անել և Ժողկոմխորհին և մեր Հողժողկոմատին կից, վորպեսզի հնարավոր լինի արագությամբ լուծել գյուղացիների դիմումները և բանավոր բողոքները:

Տուգանքների, ապօրինի խուզարկությունների և ձերբակալությունների մասին իմ զեկուցման մեջ յես ասացի, թե ինչ կակած, վոր այս ուղղությամբ քյալլագյողներն ամենուրեք խստորեն պետք է պատժվեն, սակայն անհրաժեշտ է ամենակարճ ժամանակամիջոցում վերանայել շրջանային գործադիր կոմիտեների իրավունքները պարտադիր վորոշումների հրատարակման ուղղությամբ և վերջնականապես սահմանել այն չափանիշները, վորով պետք առաջնորդվեն տեղերը՝ սկսած գյուղից մինչև շրջանները՝ տուգանքներ սահմանելիս և ադմինիստրատիվ միջոցառումների դիմելիս:

Այն վայրերում, վորտեղ վերջերս նկատվում են հեղափոխական որինականության խախտման դեպքեր, անհրաժեշտ է հատուկ միջոցառումների դիմել մասսայականացնելու Համամիութենական Կենտգործկոմի և Ժողկոմխորհի հունիսի 28-ի վորոշումները, Գերագույն Դատարանի կողմից և Հանրապետական Դատախազությունից ընկերներ ուղարկել հիշյալ շրջանները՝ հատուկ զեկուցումներ կարդալու հեղափոխական որինականության շուրջը և միաժամանակ միջոցներ ձեռնարկել նոր ընկերներով ուժեղացնելու դատական որգաններն այնտեղ, վորտեղ անհրաժեշտ է: Պետք է եվ ավելի ուժեղացնել պայքարը կուլակի և դաշնակի դեմ, կոլտնտեսական գործերի և պետական ու կոոպերատիվ կազմակեր-

դությունների դույքի կողոպտման և հրկիզման գործերը քննել արագությամբ, առանց բյուրոկրատիկ քաշքշուկների և ձգձգումների և խստորեն պատժել հանցագործներին:

Վերջերս նկատվում են դեպքեր, յերբ մեր հանրապետության մի շարք շրջաններում չքավոր և միջակ աշխատավորական տընտեսությունները, կոլտնտեսությունները իրենց մթերման պլանների կատարման գործում գտնվում են առաջավոր դիրքերում, իսկ կուլակ և ունևոր տնտեսությունները խուսափում են մթերման և հարկի գծով իրենց պարտավորությունները ժամանակին կատարելուց: Վորոշ տեղեր նման զանցառումների հանդեպ մեր դատական օրգանները համբերատար վերաբերմունք են ցույց տալիս:

Անհրաժեշտ է ամենաուժեղ կտրուկ միջոցների դիմել շատ կարճ ժամանակամիջոցում հարկադրելու կուլակային և ունևոր տնտեսություններին կատարելու իրենց պարտականությունները պետության հանդեպ: Կուլակի և դաշնակի դեմ պայքարը չպետք է սահմանափակվի այն բանը պարզելով, թե վորտեղ են նրանք կատարում այս կամ այն հրկիզումները, թալանումները, վորպեսզի պատժվեն, այլև նոր որենքի համաձայն պետք է դատական պատասխանատվության յենթարկել այն կուլակ և դաշնակ տարրերին, վորոնք շարունակում են իրենց վարկաբեկիչ և պրովոկացիոն աշխատանքը կոլտնտեսությունների դեմ, վորոշ տեղեր օգտագործելով գյուղի հետամնաց խավերին՝ կոլտնտեսությունները ներսից պայթեցնելու համար:

## ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Կոլտնտեսական շուկաների կանոնավոր կազմակերպումը համարվում է կոլտնտեսությունների կազմակերպական և տնտեսական ամրացման, դրա հետ մեկտեղ և բանվորական մատակարարման գործը լավացնելու կարևոր նախապայմաններից մեկը: Սպեկուլյանտները, զանազան շարչիները և նախկին առևտրականները կամենում են օգտագործել մեր կոլտնտեսական շուկաները և կատարել իրենց սև գործը: Հաճախ մենք տեսնում ենք, թե ինչպես սպեկուլյանտները վխտում են մեր կոլտնտեսական շուկաներում, թե՛ գնումներ, և՛ թե վաճառումներ կատարելով՝ շատ հաճախ կոլտնտեսականի անվան կամ պետական ծառայողի կեղծ քողի տակ: Պայքարն այս տարրերի դեմ անխնա և արագ պետք է լինի: Սպեկուլյանտին պատժելով, միաժամանակ պատասխանատվության պետք

յենթարկել մեր այն տնտեսական հիմնարկությունների, վորոնք կոլտնտեսական շուկայում անգործունյա են մատնել արդյունաբերական ապրանքների վաճառման գործը և ամեն ինչ թողել ինքնահոսի:

Հեղափոխական որինականության խախտման բազմաթիվ դեպքեր տեղի յեն ունեցել անցյալում: Վերջերս վորոշ տեղեր նկատվում են կոլտնտեսական դեմոկրատիայի խախտում, ընտրությունների սկզբունքի վոտնահարում կոլտնտեսություններում, նրանց ղեկավար կադրերի հաճախակի անիմաստ փոփոխություններ, աշխատանքներից հեռացում, փոխադրում այս կամ այն վայրը և այլն: Կուսակցությունը խստորեն պահանջում է հետևողական կերպով կենսագործել կոլտնտեսական դեմոկրատիայի սկզբունքը:

Մեծ կարևոր նշանակություն ունի նաև կոլտնտեսություններից հեռացածների և հեռացվածների հետ հաշիվների վերջնական մաքրման խնդիրը: Այս ուղղությամբ մենք շատ ենք դանդաղել: Վերջերս շնորհիվ Կենտկոմի կտրուկ միջոցների մենք բամբակային շրջաններում գրեթե վերջնականապես լուծեցինք այդ հաշիվները՝ չնայած տեղական վորոշ ընկերների դիմադրությունների:

Այս խնդրի վերջնական լուծումը ավելի արագորեն կնպաստի կոլտնտեսությունների տնտեսական և կազմակերպական ամրացմանը:

Բավական զգալի դեր ունեն կատարելու կոլտնտեսություններում կազմակերպված ընկերական դատարանները՝ մանավանդ կոլտնտեսականների շարքերում աշխատանքային դիսցիպլինան ամրացնելու գործում: Սակայն պետք է ասել, վոր այդ ընկերական դատարանները շատ տեղ անգործության են մատնված: Բացակայում է մեր դատական որգանների գործնական ղեկավարությունը. մինչև որս նրանք չունեն իրենց կանոնադրությունը:

Անհրաժեշտ է, վոր շատ մոտ ապագայում մեր Գերագույն դատարանը Կոլտնտկենտրոնի հետ կազմի այդ ընկերական դատարանների կանոնադրությունը և պարտադրի շրջանային դատական որգաններին ունենալու իրենց մշտական ղեկավարությունը նրանց ամենորյա աշխատանքներին:

Հեղափոխական որինականության խախտման դեպքեր ավելի շատ տեղի յեն ունենում ազգային փոքրամասնությունների շրջաններում: Այս հետևանք է այն բանի, վոր մենք չունենք ազգ. փոքրամասնությունների անհրաժեշտ կադրեր, մանավանդ մեր դատական որգաններում: Այս տարի Յերևանում մենք ունեցանք

թուրքական գյուղական և շրջանային ակտիվի հատուկ դասընթացներ, վորոնք տվեցին բավական դրական արդյունքներ: Այդ գործը պետք է շարունակել և գալիք ձմռան ամիսներին թե՛ շրջանային կենտրոններում և՛ թե Յերևանում, դասընթացներում գերակշռող տեղ տալով դատական օրգաններում աշխատելու ցանկություն ունեցող ընկերներին: Միաժամանակ կուրս պետք է վերցնել՝ բոլոր ազգային փոքրամասնություն ունեցող շրջանների դատական օրգաններում ունենալու տեղական կամ յեկվոր թուրք, յեզիդ կամ ռուս ընկերներ:

Անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել ուժեղացնելու մեր միլիցիայի ղեկավար կադրերը, ուղղել նրանց սպասարկման գործը, նրանց տնտեսական կազմակերպությունները և քաղդաստիարակման աշխատանքները: Այստեղ մենք ունենք մի շարք զգալի թերություններ: Բավական է միայն հիշել Վարանցովկայի դեպքերը, վորից և անհրաժեշտ կլինի յեզրակացնել զտման կարգով մեր միլիցիայի ղեկավար կազմը վերանայելու անհրաժեշտությունը: Վորպեսզի ավելի ամրացրած լինենք հեղափոխական օրինականությունը տեղերում՝ հարկավոր է բոլոր շրջաններում ունենալ դատախազներ, այլապես աշխատանքները կշարունակեն տուժել: Որինակ՝ բոլորովին հանդուրժելի չէ, յերբ մենք Թալինի շրջանի դատախազի պարտականությունները դնում ենք Արթիկի շրջանի դատախազի վրա, Իջևանի շրջանինը՝ Շամշադինի, կամ Բայազետինը՝ Բասարգեչարի դատախազության վրա:

Այս դրությանը պետք է վերջ տալ և հիշյալ բոլոր շրջաններում ունենալ առանձին ազատված դատախազներ:

Վերջին խնդիրը մեր Հանրապետական Դատախազության և Գերագույն Դատարանի համար մի ղեկավար օրգան կազմակերպելու անհրաժեշտությունն է: Խոսքս վերաբերում է Արդարադատության Ժողովրդական Կոմիսարիատին, վորի բացակայությունը զգալիորեն անդրադառնում է մեր դատական օրգանների աշխատանքների միասնության վրա: Յես կարծում եմ, վոր խորհրդակցությունը դրականորեն կլուծի այս խնդիրը, քանի վոր կոմիսարիատի կազմակերպումը չի կապված խոշոր ծախսերի հետ:

Ահա այն բոլորը, ինչ հնարավոր է ասել հեղափոխական օրինականության ամրացման մասին:

Յեթե շնորհիվ խորհրդային իշխանության և սոցիալիստական շինարարության անարգել թափի քաղաքներում բանվորությունը հսկայական չափով աճել է քաղաքականապես և փոխվել են նրա

կուլտուր-կենցաղային պայմաններն ու պահանջները, որպես սոցիալիզմի կառուցման ակտիվ մարտիկի, այս ներկայումս նույնը պիտի ասել և գյուղի կոլտնտեսականի և չքավոր ու միջակ աշխատավորական մասսայի վերաբերյալ: Գյուղում կոլտնտեսականը, որպես սոցիալիստական շինարարության անմիջական մարտիկ, և չքավոր ու միջակ աշխատավորական տնտեսությունները, որոնք իրենց աշխատանքներով ոգնում են կոլտնտեսական շինարարությանը, պահանջում են մեզնից մարդավայել վերաբերմունք, հեղափոխական օրինականության անխախտ կիրառումն ամենուրեք:

Մեր բոլոր շրջանային կուսկազմակերպությունները պիտի գլխավորեն հեղափոխական օրինականության ամրացման համար մղվող պայքարը, պիտի անշեղորեն կենսագործեն Համամիութենական Կենտկոմի որոշումը—«հետևողականորեն կենսագործել կուսակցության ցուցումը՝ կոմունիստներին օրենքները խախտելու ամենափոքր փորձի համար ամենախիստ պատասխանատվության կանչելու վերաբերյալ»:

## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ*)

Ընկերնե՛ր,

Խորհրդային Միության հերոսական պրոլետարիատը և ողջ աշխատավորությունն այսօր հանդիսավոր կերպով տոնում են պրոլետարական դիկտատուրայի մարտական օրգանի՝ Պետական Դատախազության պանծալի տասնամյակը (ծափահարություններ):

Լայնածավալ Խորհրդային Միության բանվորները, կոլտնտեսականները, աշխատավորական լայն զանգվածները կոմունիստական կուսակցության անմիջական ղեկավարությամբ հսկայական նվաճումներ են ձեռք բերել սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում:

Մարդկության ամբողջ պատմության մեջ աննախընթաց են այդ նվաճումների չափն ու թափը, որակն ու արժեքը:

Մեր յերկրի բանվոր դասակարգը, աշխատավորական լայն զանգվածները, կառուցելով սոցիալիստական հասարակարգը և ամրապնդելով պրոլետարական պետությունը, դրանով իսկ արագաց-

*) Ընկ. Անանյանի ճառը՝ դատախազության տասնամյակին նվիրված հանդիսավոր նիստում, 1932 թ. հուլիսի 22-ին

նում են և յերաշխավորում սոցիալիստական հեղափոխության վերջնական հաղթանակն ամբողջ աշխարհում (ծափահարություններ):

Յերբեմնի բուրժուական–ֆեոդալական հսկայածավալ Ռուսաստանի պատմական, սոցիալական դիմագիծը հիմնովին վերափոխվել է և դարձել անճանաչելի:

Կառուցվում են արդյունաբերական աննման հսկաներ՝ մարդկային կուլտուրայի, գիտության և տեխնիկայի վերջին հաղթանակի հիմունքներով: Հիմնովին վերակառուցման է յենթարկվում գյուղացիական տնտեսությունը՝ նոր, սոցիալիստական կոլեկտիվացման հիմունքներով:

Արդյունաբերական այս հսկաների կառուցմամբ և մանր-սեփականատիրական գյուղատնտեսության արմատական վերակառուցմամբ կերպարանափոխվում է մեր յերկրի սոցիալական դեմքը և կուլտուրական նկարագիրը:

Սոցիալիստական կառուցման այս ընդհանուր հաղթական արշավին համընթաց՝ հեղաշրջվել է նաև Հայաստանի տնտեսական կառուցվածքը, կուլտուր-կենցաղային պատկերը: Յերբեմնի ցարական հետամնաց գաղութը և դաշնակցական–բուրժուական արկածախնդրության մշտնջենական այդ վայրը վերածվում է ինդուստրիալ–ագրարային յերկրի և իր տնտեսական ու կուլտուրական շինարարության զարգացման ուժեղ թափով բոլորովին անճանաչելի յե դարձել:

Շատ ժամանակ չի անցել այն օրվանից, յերբ միջազգային բուրժուազիան և իր «գիտունները» հեգնանքով ու ծաղրով դիմավորեցին մեր հնգամյակի հոյակապ ծրագիրը, համարելով այն բոլշևիկյան ֆանտաստիկա և քաղաքական ագիտացիայի հերթական պրիեմ: Սակայն, հնգամյակի առաջին տարին դեռ նոր բոլորած՝ բուրժուական աշխարհի պետական գործիչները և խոշոր տնտեսագետներն ստիպված էին խոստովանելու այն բոլոր նվաճումները, որ մենք ունեցանք սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում:

Արդյունաբերական հսկաների արագընթաց կառուցումը, գյուղացիական տնտեսության աննախընթաց մեքենայացումը, բանվորության քանակական և որակական բուռն աճումը, բազմամիլիոն աշխատավորության կուլտուր-կենցաղային վիճակի բարելավումը, մասսաների կողմից գիտության և տեխնիկայի նվաճումը — այս ամենն անվիճելի յեն և ակնբախ: Մեր այս վիթխարի վերելքը կա-



3674

տարվում է մի դարաշրջանում, յերբ նախկին կապիտալիստական սիստեմը գալարվում է իր որհասական վախճանի ճգնաժամությունների մեջ։

Կոմունիստական կուսակցության անմիջական ղեկավարությամբ՝ մեր յերկրի բանվոր դասակարգը սոցիալիստական շինարարության ֆրոնտում իր ունեցած հաղթանակները ձեռք է բերել մեր դասակարգային թշնամիների դեմ անողոք և անխնա պայքար մղելու միջոցով։

Յեվ ահա, այդ անհաշտ դասակարգային պայքարի ընթացքում պրոլետարիատի դիկտատուրայի մարտական պահակը և նրա լավագույն որգանն է հանդիսացել մեր պետական դատախազությունը, վորի պանծալի գործունեության տասնամյա հոբելյանը տոնում են Խորհրդային Միության վողջ բանվորությունը և աշխատավորական լայն զանգվածները։

Խորհրդային Հայաստանի հեղափոխական Դատախազությունը միշտ յեղել է առաջավոր մարտական դիրքերում՝ այդ հերոսական դասակարգային պայքարում։ Սոցիալիստական շինարարության զուգընթաց աճել և զարգացել է մեր դատախազությունը և իր այդ տասնամյա գործունեության ընթացքում նա քայլ առ քայլ հետևել է Խորհրդային իշխանության դասակարգային թշնամու բոլոր մեքենայություններին, մերկացրել է կուլակային ու ամեն կարգի հակահեղափոխական դավադրությունները և անխնա հարված է իջեցրել հակախորհրդային բոլոր սև ուժերի գլխին։

Անշեղորեն ընթանալով մեր մեծ ուսուցչի՝ Լենինի պատգամներով, Դատախազությունը հետևողականորեն պայքարել է հեղափոխական որինապահության հաղթանակի համար, քայլ առ քայլ հետապնդելով բոլոր նրանց, ովքեր խախտել են պրոլետարական պետության սահմանած որենքները և հասարակական սիստեմը։

Այսոր Խորհրդային Միության բանվորները, կոլտնտեսականները և աշխատավորական լայն զանգվածները հաղթականորեն ավարտում են առաջին հնգամյակի ծրագիրը չորս տարում և կանգնած են յերկրորդ հնգամյակի թևակոխման նախորյակին։ Կոմունիստական կուսակցության անմիջական ղեկավարությամբ՝ մեր յերկրի բանվոր դասակարգը ձեռնարկում է յերկրորդ հնգամյակի անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցմանը։

Հանցագործ միամտություն և հիմարություն կլինի կարծել, թե սոցիալիզմի կառուցման մեր հետագա աշխատանքները կընթա-

նան խաղաղ և սահուն պայմաններում, առանց դասակարգային պայքարի:

Ընկ. Ստալինն ասում է. «Պատմության մեջ չի յեղել մի դեպք, վոր մեռնող դասակարգը կամավոր կերպով դիջեր իր դիրքերը»: «Մեռնող դասակարգերն ընդդիմանում են վոչ թե այն պատճառով, վոր դարձել են ավելի ուժեղ, քան մենք, այլ վորովհետև սոցիալիզմն ավելի արագորեն է աճում, քան նրանք և նրանք ավելի թույլ են դառնում, քան մենք: Յեվ հենց այն պատճառով, վոր նրանք ավելի յեն թույլ դառնում՝ նախազգում են իրենց գոյության վերջին որերը և հարկադրված են ընդդիմանալ բոլոր ուժերով, բոլոր միջոցներով»:

Սրանից, իհարկե, պետք է յեզրակացնել, վոր յերկրորդ հնգամյակի իրականացման պրոցեսում, անդասակարգ հասարակության կառուցման ժամանակ վոչ միայն չի վերանում դասակարգային անողոք պայքարը, հետևաբար նաև պրոլետարական դիկտատուրայի անհրաժեշտությունը, խորհրդային պետության ամրապնդման հրամայականությունը, այլ «հետագայում դեռ անխուսափելի յե դասակարգային պայքարի սրումն առանձին մոմենտներում, մանավանդ առանձին շրջաններում, սոցիալիստական կառուցման առանձին բնագավառներում, վորը միաժամանակ ընդգծում է բուրժուական ազդեցությունների գոյության, իսկ վորոշ դեպքերում՝ նաև աշխատավորների առանձին շերտերի և խմբերի վրա նրանց ուժեղանալու անխուսափելիությունը դեռ յերկար ժամանակ, պրոլետարիատին անհարազատ դասակարգային ազդեցությունների ներթափանցումը բանվորների շրջանում և նույնիսկ կուսակցության մեջ» (17-րդ կուսկոնֆերանսի վորոշումից):

Այստեղից էլ բղխում են դատախազության հրամայական խնդիրները յերկրորդ հնգամյակում:

«Ով-ում»-ի լենինյան պրոբլեմը մենք լուծել ենք գյուղատնտեսության ասպարեզում, վորի 60—65 տոկոսն արդեն ընդգրկված է կոլտնտեսություններում: Կուլակությունը վորպես դասակարգ լիկվիդացիայի յե յենթարկվում համատարած կոլեկտիվացման հիման վրա:

Մեր դասակարգային թշնամիները (կուլակը, դաշնակը) իրենց հոգևարքի որերն են ապրում, նրանք փոխել են իրենց պայքարի զենքերը Խորհրդային իշխանության դեմ: Նրանք այս կամ այն վայրում հանդես են գալիս վոչ այնքան բացահայտ կերպով, վորքան քողարկված, նոր և նուրբ մեթոդներով:

*Սողոսկել մեր կոլտնտեսությունները, կազմալուծել ներսից, արգելակել սոցիալիստական ձևերը, քայքայել պրոլետարական դիսցիպլինան, կատարել տեռոր, հրկիզումներ և այլն—ահա կուլակության և իր զինակից դաշնակիցների պայքարի «նուրբ» ձևերը:*

*Շնորհիվ այն բանի, որ մեր աճող և զարգացող արդյունաբերությունը նոր բանվորական ուժերի հսկայական պահանջ է ներկայացնում և գործազրկությունը մեզ մոտ խսպառ վերացված է, կուլակային և այլ հակախորհրդային տարրերը հնարավորություն են ունենում մուտք գտնել մեր գործարանները և երբեմն այնտեղ կատարել իրենց սև գործը: Եվ վերջապես՝ կապիտալիստական պետություններով շրջապատված լինելու հանգամանքը, երբ այդ երկրների տնտեսական ծանր ճգնաժամի խորացումն ավելի արագացնում է ինտերվենցիայի վտանգն ընդդեմ խորհրդային իշխանության, նույնպես ժամանակավոր սնունդ է տալիս մեր երկրի ներքին թշնամիներին:*

*Ինչպես տեսնում ենք, դասակարգային պայքարի ոչ վերացման, ոչ էլ նույնիսկ «մեղմացման» խնդիր գոյություն ունենալ չի կարող, այլ մեր դատական օրգանները, պետական դատախազությունը, վերակառուցելով իրենց աշխատանքները՝ պետք է հանդիսանան պրոլետարական դիկտատուրայի ամենաուժեղ օղակներից մեկը, հսկեն հեղափոխական օրինականության անշեղ կիրառմանը:*

*Խորհրդային արդարադատության և դատախազության պայքարի զենքը՝ ընդդեմ մեր դասակարգային թշնամիների՝ պետք է լինի նույնչափ ուժեղ և հստակ, որքան մեր ընդհանուր ժողովրդական տնտեսության զարգացման թափն ու ուղին են՝ ուժեղ և հստակ:*

*Սակայն սրանից չպետք է եզրակացնել, որ մեր դատական օրգանները պետք է լինեն միայն պատժիչ օրգանի դերում: Սոցիալ-դաստիարակչական աշխատանքը եղել է անցյալում և առավել ևս լինելու է ապագայում դատարանների ու դատախազության պայքարի և աշխատանքի հիմնական մեթոդը:*

Անողոք պայքար և հեղափոխական բռնություն՝ դասակարգային թշնամու հանդեպ: Ուղղիչ սոցիալ-դաստիարակչական հետևողական աշխատանք՝ *աշխատավորական օրինազանց տարրերի վերաբերմամբ:*

*Այս են եղել խորհրդային արդարադատության, դատախազության տասնամյա փայլուն գործունեության ուղին և մեթոդը: Եվ մենք չենք կասկածում, որ մեր դատարանն ու դատախազու-*

թյունն առավել ևս մեծ թափով կշարունակեն քայլել նույն ուղղությամբ:

Պետական Դատախազությունը դասակարգային-հեղափոխական պայքարի առաջավոր մարտիկն է հանդիսանում: Եվ նա պետք է հստակորեն գիտակցի, որ այսօր առավել քան երբեք՝ հեղափոխական օրինականության անշեղ պահպանումը պահանջում են մեր երկրի բանվորական և աշխատավորական մասսաները: Եվ ընկ. Ստալինի այն խոսքերը, թե շատ անգամ թեորիան հետ է մնում պրակտիկայից՝ ամբողջապես պիտի վերագրել նաև մեր դատական օրգաններին, Դատախազությանը: Խոսք չի կարող լինել, որ մեզ մոտ, Խորհրդային Հայաստանում շատ անգամ այս կամ այն վայրում տեղի են ունենում կոպիտ խախտում հեղափոխական օրինականության՝ թե կոլտնտեսշինարարության բնագավառում, և՛ թե մեր մյուս աշխատանքների ասպարեզում: Ես կարող եմ այստեղ բազմաթիվ օրինակներ բերել մեր գյուղերում և քաղաքներում հեղափոխական օրինականության խախտման վերաբերյալ, սակայն ժամանակն ինձ չի ներում: Դուք, անշուշտ, մեր մամուլում հաճախ կարդում եք այդ մասին, և երբեմն այդ բոլորն անցնում են մեր դատական օրգանների կողքով, վրիպում են նրանց ուշադրությունից: Հեղափոխական օրինականության ամրացումը և անխախտ կիրառումը չպիտի հանդիսանա միայն մեր դատական օրգանների գործը, հարկավոր է ստեղծել խորհրդային հասարակայնության լայն ակտիվ դրա շուրջը, օղակել աշխատավորական լայն մասսաներով մեր դատական օրգանները և պատրաստել ժողովրդական ատենակալների, հասարակական - պաշտպանների և մեղադրողների մշտական ուժեղ կադր:

Պիտի ուժեղացնել պայքարը բյուրոկրատիզմի դեմ, կոլտնտեսական առևտուրը խանգարողների դեմ: Ամբողջ հասակով մեր դատական օրգաններն իրենց երեսը պիտի դարձնեն դեպի մեր սոցիալիստական արտադրությունը, արդյունաբերության աշխատանքի արտադրողականության բարձրացումը, աշխատանքի դիսցիպլինայի ամրացումը և կոլտնտեսշինարարության կազմակերպական ու տնտեսական ամրացումը:

Օգնելով մեր դատական օրգաններին, ավելի բարձրացնելով նրանց հեղինակությունն աշխատավորական լայն մասսաների մեջ՝ մենք հնարավորություն կունենանք հեղափոխական օրինականության պահպանումն ավելի ամուր բոլշևիկյան անխախտ դիրքե-

## Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

Խ. Ս. Հ. Մ. ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ, ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ
Յ Ե Վ
Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ
Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն Ե Ր Ը

# ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՈՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

## ԽՍՀՄ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ՑԵՎ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

### ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Նշելով Դատախազության կազմակերպման տասնամյակը և ԽՍՀ Միության՝ այդ ժամանակաշրջանում ունեցած հաջողությունները հեղափոխական օրինականության ամրացման գործում, վոր հանդիսանում է պրոլետարական դիկտատուրայի ամրապնդման, բանվորների ու աշխատավոր գյուղացիների շահերի պաշտպանության և աշխատավորության դասակարգային թշնամիների (կուլակության, սպեկուլյանտ–վերագնողների, բուրժուական վնասատուների) ու նրանց հակահեղափոխական քաղաքական ագենտուրայի դեմ պայքարելու կարևորագույն միջոցներից մեկը՝ ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը հատկապես մատնանշում են, վոր դեռևս պատահում են հեղափոխական օրինականության խախտման բազմաթիվ դեպքեր պաշտոնատար անձանց կողմից և չեղումներ դա կյանքում կիրառելիս, մանավանդ գյուղում:*

*Համապատասխան դրան, ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը առաջարկում են դաշնակից ու ինքնավար հանրապետությունների կառավարություններին, դատախազության օրգաններին և յերկրային (մարզային) գործադիր կոմիտեներին՝*

1. *Կատարել պաշտոնատար անձանց կողմից հեղափոխական օրինականության խախտման փաստերի մասին ստացված հայտարարությունների ստուգումն ու այսուհետև ապահովել այդ խախտումների գործերի արագ ստուգումը և պատժի միջոցների կիրառումը, մինչև իսկ դատի տալը այն պաշտոնատար անձանց, վորոնք թույլատրել են այդ խախտումները կամ մեղավոր են բյուրոկրատական վերաբերմունքի մեջ դեպի աշխատավորների հայտարարությունները, միաժամանակ ամեն կերպ աջակցելով Գանգատների Բյուրոյի աշխատանքին, մանավանդ բանվորների, աշ-*

խոստավոր գյուղացիների, կարմիր բանակայինների, մասնագետների և այլոց գանգատների ստուգման ու քննության գործում:

2. Միջոցներ ձեռք առնել ստուգելու ռայոնական գործադիր կոմիտեների և գյուղական խորհուրդների կողմից կիրառվող տուգանման պրակտիկայի ստուգումը, մանավանդ գյուղատնտեսական կամպանիաների կապակցությամբ, և ամենակարճ ժամանակում բեկանել ու վերացնել այն ադմինիստրատիվ տուգանքներն ու գանձումները, որ կատարված են համամիութենական և հանրապետական օրենսդրության խախտման հետևանքով:

3. Վերացնել հատուկ առաջադրանքներ սահմանելու, ապակուլակացման և այլ այդօրինակ փաստերը, որոնք թույլ են տրված՝ խախտելով խորհրդային իշխանության օրենքները՝ առանձին կոլտնտեսականների և անհատական միջակ տնտեսությունների վերաբերմամբ, հետևողականորեն կիրառել խորհրդային օրենքներով սահմանված առաջադրանքներն ու միջոցները կուլակային տարրերի դեմ:

4. Պարտադրել դատարաններին ու դատախազությանը խստագույն պատասխանատվության ենթարկելու պաշտոնատար անձանց՝ աշխատավորության իրավունքների խախտման բոլոր դեպքերում, մանավանդ ապօրինի ձերբակալումների, խուզարկությունների, բռնագրավումների, գույքի գրավման և այլ դեպքերում, ու պատժի խիստ միջոցներ կիրառել հանցավորների վերաբերմամբ:

5. ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը խորհրդային իշխանության բոլոր տեղական օրգանների և դատախազության ուշադրությունն են հրավիրում այն հանգամանքի վրա, որ հեղափոխական օրինականության խստագույն կիրարկումը կոլտնտեսությունների և կոլտնտեսական ամբողջ մասսայի վերաբերմամբ հանդիսանում է առանձնապես կարևոր խնդիր այնպիսի պայմաններում, երբ աշխատավոր գյուղացիների մեծամասնությունը միացած է կոլտնտեսությունների մեջ:

ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը առաջարկում են խորհրդային իշխանության տեղական օրգաններին և դատախազությանը՝ անշեղորեն խիստ պատասխանատվության կանչել այն բոլոր պաշտոնատար անձանց, որոնք հանցավոր են կոլտնտեսական շինարարության հիմնական սկզբունքների խախտման մեջ՝

ա) կոլտնտեսությունների վարչությունների և այլ օրգանների ընտրականության խախտման մեջ.

բ) կոլտնտեսությունների գույքի, նրանց դրամական միջոցների և նրանց օգտագործման հանձնված հողերի վերաբերմամբ ինքնակամ վարվելու մեջ.

գ) կոլտնտեսությունների վերաբերմամբ հրամանատարության անթույլատրելի միջոցներ գործադրելու մեջ (մասնավորապես՝ կոլտնտեսությունների ինքնակամ ձևումը, նրանց խոշորացումը և այլն):

Խորհրդային իշխանության տեղական օրգանները և դատախազությունը պարտավոր են իրականում ապահովել ԽՍՀ Միության կառավարության ընդունած վորոշումների անշեղ ու ամենուրեք կիրառումը կոլտնտեսությունների ու կոլտնտեսականների առևտրի ծավալման մասին, կոլտնտեսական շուկաներ ստեղծելու մասին, անասունների, թռչունների և այլոց ստիպողական հանրայնացման արգելման մասին:

6. Հեղափոխական օրինականության հետագա ամրապնդման, դատարանային, պրոկուրատուրական օրգանների նշանակության բարելավման ու բարձրացման նպատակով կատեգորիկ կերպով արգելել ժողովրդական դատավորների հեռացումը կամ տեղափոխումը այլ կերպ, քան յերկրային (մարզային) գործադիր կոմիտեների վորոշմամբ, իսկ ռայոնական դատախազների հեռացումը կամ տեղափոխումը՝ այլ կերպ, քան յերկրային (մարզային) դատախազի կամ դատախազության և արդարադատության ժողովրդական կոմիսարիատների վերադաս օրգանների վորոշմամբ:

ԽՍՀ Միության ԿԳԿ նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀ Միության ԺԿԽ նախագահ՝ Վ. ՄՈԼՈՏՈՎ (ՍԿՐՅԱԲԻՆ)

ԽՍՀ Միության ԿԳԿ քարտուղարի պարտակ. կատարող՝ Ա. ՄԵԴՎԵԴՅԵՎ

Մոսկվա, Կրեմլ

1932 թ. հունիսի 25

## ՀՍԽՀ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

### ԽՍՀՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի ՎՈՐՈՇՄԱՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*«Ամենաանինչյան օրինականության, ամենաանինչյան խախտումը խորհրդային կարգերի՝ արդեն իսկ ճեղք է, որն անմիջապես կօգտագործեն աշխատավորների թշնամիները» (Լենին)։ Ցեղ ընդհատակը՝ «հեղափոխական օրինականությունը հանդիսանում է կարևորագույն միջոցներից մեկը պրոլետարական դիկտատուրայի ամրապնդման, բանվորների և աշխատավոր գյուղացիների շահերի պաշտպանության և պայքարի՝ ընդդեմ աշխատավորների դասակարգային թշնամիների» (Ստալին)։*

*Սոցիալ-քաղաքական այսպիսի արժեքավորմամբ է բացատրվում այն հատուկ ուշադրությունը, վորին արժանացել են հեղափոխական օրինականության խնդիրները կուսակցության և Խորհրդային իշխանության կողմից ընդհանրապես և սոցիալիստական շինարարության հանդուցային ետապներում՝ մանավորապես։*

*Զնայած հեղափոխական օրինականության այսպիսի արժեքավորման՝ «դեռևս զգալի չափով խախտվում է հեղափոխական օրինականությունը պաշտոնյաների կողմից և գործնականում խեղաթյուրվում է նրա կենսագործումը, մանավանդ գյուղում»։*

*Այս ամենը նկատի ունենալով՝ ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը ս. թ. հունիսի 25-ին ընդունել են հատուկ վորոշում հեղափոխական օրինականության մասին, տալով այդ վորոշմանը կարևորագույն քաղաքական նշանակություն։*

*Առաջնորդվելով ԽՍՀՄ կառավարության հունիսի 25-ի, այլև ԱՍՖԽՀ կառավարության վորոշումներով՝ ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն* վորոշում է.—

Առաջարկել՝

1. *Ժողկոմխորհի գործերի կառավարչությանը՝ ապահովել «Օրենքների և Կարգադրությունների Ժողովածու»-ի անընդհատ հրատարակումը և անմիջական բաշխում—առաքումը համապատասխան հիմնարկություններին ու կազմակերպություններին։*

2. *Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտին՝ «Խորհրդային իրավունքի և խորհրդային շինարարության» ամսագրի դծով՝ ուսումնասիրել հեղափոխական օրինականության հիմնական պրոբլեմները։*

3. «Խորհրդային Հայաստանին», այլև բոլոր տեղական թերթերին՝ ժողովրդականացնել հեղափոխության օրինականության քաղաքական արժեքը սոցիալիստական շինարարության և պրոլետարիատի դասակարգային պայքարի ասպարեզում, ժամանակին տպագրել խորհրդային օրենսդրությունը, մերկացնել օրինականության ամեն կարգի խախտումները, արժանի տեղ տալ դատական հաշվետվություններին և այլն:

4. Գերագույն Դատարանին և Հանրապետական դատախազությանը՝

ա) Կազմակերպել «Հեղափոխական օրենսդրության ամրապնդման և ժողովրդականացման տասնօրյակ» և այդ տասնօրյակի աշխատանքներում ընդգրկել կուսակցական, խորհրդային, պրոֆմիութենական, կոմյերիտական կազմակերպությունների, բանվորների, կոլտնտեսականների և ընդհանրապես աշխատավորական լայն խավերը:

բ) Հայտաբերել, հետապնդել և դատել հեղափոխական օրինականության խախտման դեպքերը, կազմակերպելով հասարակական ցուցադրական պրոցեսներ, առանձնապես կոլտնտեսությունների կազմակերպական–տնտեսական ամրապնդման, խորհրդային–կոլտնտեսական առևտրի ծավալման, ապակուլակացման, գյուղի սոցիալիստական շերտավորման, կայուն առաջադրանքների, անհատական հարկումների, ապօրինի խուզարկումների, կալանքի, տուգանման, բռնագրավումների և այլ ասպարեզներում, նշանակելով այդ պրոցեսները տեղերում, ՄՏԿ–ներում, գործարաններում, գյուղերում և այլն:

գ) Ապահովել խորհրդային հիմնարկությունների և տնտեսական ձեռնարկությունների վորոշումների ու գործողությունների օրինականության ստուգումը, անհապաղ կանխելով, կասեցնելով, վերացնելով և հետապնդելով օրինազանցության յերևույթները:

դ) Հատուկ շրջաբերական–նամակով տալ ժողովրդական դատարաններին ու շրջաններին և քաղաքային դատախազներին ԽՍՀՄ կառավարության ս. թ. հունիսի 25–ի վորոշման հիմունքներով ղեկավար ցուցումներ հեղափոխական օրինականության ամրապնդման կոնկրետ միջոցառումների կենսագործման շուրջը:

5. Հրահանգել Բողոքների Բյուրոյին՝ արագացնել բանվորների, կոլտնտեսականների և ընդհանրապես խորհրդային քաղաքացիների դանգատների քննությունը հեղափոխական օրինականու–

թյան խախտումների, բյուրոկրատական քաշքշուկների և վարչական այլ խեղաթյուրումների դեմ:

բ) Ուժեղացնել հեղափոխական օրինականության և մասնավորապես ԽՍՀՄ կառավարության ս. թ. հունիսի 25-ի վորոշումների խախտումների մերկացումն ու հետապնդումը:

6. Միլիցիայի գլխավոր վարչությանը՝ հատուկ շրջաբերականով լուսաբանել հեղափոխական օրինականության կոնկրետ խնդիրները և հրահանգել միլիցիային անշեղորեն գործադրել խորհրդային օրենքները, վորոշումները, դատավճիռները և այլն:

7. ՀԱՄԽ-ին՝

ա) Աշխուժացնել և կարգավորել ժողատենակալների ընտրությունը, նրանց նախապատրաստումը և ակտիվությունը դատական պրոցեսներում:

բ) Նախապատրաստել բանվորական ակտիվը, հարվածայինների շարքերից, սոց-համատեղության կարգով, դատական աշխատակիցներ:

գ) Ցեվ ընդհանրապես ակտիվացնել ու շահագրգռել պրոֆմիութենական կազմակերպություններին հեղափոխական օրինականության խնդրում:

8. Քաղխորհուրդներին և շրջգործկոմներին՝

ա) Ունենալ ընդհանուր-քաղաքական ղեկավարություն և հսկողություն հեղափոխական օրինականության ասպարեզում, պարբերաբար քննել դատարանների և դատախազության գործունեության ղեկուցումները, առանց յերբեք միջամտելու նրա ոպերատիվ կոնկրետ խնդիրների քննարկության:

բ) Ապահովել դատարանները և դատախազական դրասենյակները համապատասխան հարմար շենքերով, առանց յերբեք կատարելու վորևե տեղափոխություն, խոսացում՝ նախքան համապատասխան և ավելի լավ շենքերով ապահովելը:

գ) Ապահովել դատական-դատախազական մարմինները նստաշրջանների, գործուղումների և ընդհանրապես պաշտոնակատարումների համար փոխադրական և այլ գործնական-կազմակերպական միջոցներով:

դ) Ձեռնարկել բոլոր միջոցները բարվոքելու դատական և դատախազական աշխատակիցների կուլտուր-կենցաղային վիճակը բնակարանի, սննդի և այլ ասպարեզներում:

9. Բոլոր կենտրոնական և տեղական հիմնարկություններին ու կազմակերպություններին՝

կատեգորիկ կերպով արգելել ժողովրդական դատավորների, այլև տեղական դատախազների ու քննիչների վորևե ուղղակի կամ քողարկված ձևով հեռացում և տեղափոխում առանց Գերագույն Դատարանի և Հանրապետության Դատախազության համաձայնության:

10 Բանգյուղտեսչությանը, Գերագույն Դատարանին և Հանրապետության Դատախազությանը՝ անմիջական և խիստ հսկողություն ունենալ այս վորոշման կատարման վերաբերմամբ և անհապաղ պատասխանատվության յենթարկել զանցառուներին:

11. Կենտգործկոմի Կազմբաժնին՝ հետևել ներկա վորոշման անշեղ կենսագործմանը և մի ամսից Կենտգործկոմի Նախագահությանը զեկուցում ներկայացնել հեղափոխական որինականության ամրապնդման ասպարեզում կատարվող աշխատանքների մասին:

Կենտգործկոմի նախագահի տեղակալ՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ

Ի տ. Կենտգործկոմի քարտուղարի՝ Գ. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ

## ԽՍՀՄ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ՈՒ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ 1932 Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 7-Ի ՎՈՐՈՇՄԱՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

### ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

1932 թ. օգոստոսի 15

Ի կենսագործումն ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի սույն թվի օգոստոսի 7-ի վորոշման՝ «Պետական ձեռնարկությունների, կոլտնտեսությունների և կոոպերացիայի գույքի պահպանության և հանրային (սոցիալիստական) սեփականության ամրապնդման մասին»— ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահությունը վորոշեց.—

Առաջարկել՝

1. Գերագույն դատարանի նախագահությանը և Հանրապետության Դատախազությանը՝ յերեք որվա ընթացքում հատուկ շրջաբերականով հրահանգել դատարաններին, դատախազներին, ժողքննիչներին և դատապաշտպանների կոլեկտիվին՝ անմիջապես և հիմնովին ուսումնասիրելու ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի օգոստոսի 7-ի վորոշումը թե՛ սոցիալ-քաղաքական արժեքավորման և թե՛ իրավական—դատավարական ձևավորման տեսակետից: Վորոշման ծանոթության առնչությամբ ստեղծել ու

կազմակերպել դասական-աշխատավորական հասարակայնություն:

2․ Գերագույն Դատարանի նախագահությանը և Հանրապետության Դատախազությանը՝ շտապ կարգով ներկայացնել օրենագծեր այն փոփոխությունների, վորոնք հիշյալ վորոշման հետևանքով պետք է մտցնել գործող օրենսդրության մեջ և միաժամանակ համապատասխան մեկնաբանություն տալ վորոշման կենսագործման ուղղությամբ:

3․ Գերագույն Դատարանի նախագահությանը և Հանրապետական Դատախազությանը՝ առաջադրել պատշաճ մարմիններին արագորեն հայտաբերել, հետապնդել և հատուկ կարգով քննարկել օգոստոսի 7-ի վորոշմամբ նախատեսված հանցանքները, կազմակերպել ցուցադրական դատեր, դատավարություններին ներգրավել բանվորներին, կոլտնտեսականներին և մենատնտես աշխատավորներին: Միաժամանակ կատարել հայտաբերված հանցանքների և դատավարությունների ամփոփումներ և պարբերաբար զեկուցել Կենտգործկոմի նախագահությանը:

4․ Հանրապետության Միլիցիայի Գլխավոր Վարչությանը՝ հրահանգել քաղաքի ու շրջանի միլիցիայի վարչություններին և վողջ միլիցիական կազմին՝ հիմնապես ուսումնասիրել հիշյալ վորոշումը, կանխել վորոշմամբ նախատեսված հանցանքները և անմիջապես հայտաբերել ու հետապնդել տեղի ունեցած հանցանքները:

5․ Քաղխորհուրդներին և շրջգործկոմներին՝ հրահանգել բոլոր խորհրդային մարմիններին ու պաշտոնյաներին՝ ուսումնասիրել օգոստոսի 7-ի վորոշումը, հասցնելով այդ ուսումնասիրությունը մինչև գործարան, գյուղխորհուրդ, ՄՏԿ, կոլտնտեսություն, պատխմբակ, բրիգադ, ցեխ, այլև աշխատավոր մենատնտեսներին, ձեռնարկելով բոլոր միջոցները՝ խորհրդային աշխատավորական ակտիվ հասարակայնություն ստեղծելու:

6․ Բոլոր կենտրոնական գերատեսչություններին ու տեղական մարմիններին, հասարակական կազմակերպություններին ու տնտեսական ձեռնարկություններին, հատկապես կոոպերատիվ-կոլտնտեսական միավորներին՝ մասսայականացնել օգոստոսի 7-ի վորոշումը՝ ստեղծել հիմնարկային ու ձեռնարկային ակտիվ՝ հայտաբերելու նախատեսված հանցանքներն ու այդ հանցանքների կոնկրետ հեղինակներին:

7․ «Խորհրդային Հայաստանին» և մամուլի բոլոր կենտրոնա-

կան ու տեղական օրգաններին՝ ամենալայն կերպով մասսայականացնել օգոստոսի 7-ի վորոշման քաղաքական նշանակությունը սոցիալիստական շինարարության ներկա ետապի տեսակետից, արձագանքելով կատարվող հանցանքների հայտաբերման ու հետապնդման դեպքերին և լայն տեղ տալ ցուցադրական դատավարությունների հաշվետվություններին:

8. Կենտգործկոմի Կազմբաժնին՝ հրահանգել խորհուրդներին և գործկոմներին՝ վերադասավորելու իրենց աշխատանքներն օգոստոսի 7-ի վորոշման կենսագործման ուղղությամբ, հսկողություն ունենալ կատարվող աշխատանքների վերաբերմամբ, հրատարակել հանրամատչելի բրոշյուր՝ մասսայականացնելու համար վորոշման քաղաքական նշանակությունը և մի ամսից հետո զեկուցում ներկայացնել այս ասպարեզում կատարած աշխատանքների արդյունքի մասին:

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահի տեղակալ՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ

Ի. ա. Կենտգործկոմի քարտուղարի՝ Գ. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220038421

Գինը 40 կ.

(124)

А II 38421

А. Ананян

Революционная законность и наши очередные задачи

Партиздат ССР Армении. 1933. Эривань.